ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«14» 11 2014թ. N ԱՊ/6247-14

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ի իրավաբան
պարոն Գևորգ Հայրապետյանին

Ի պատասխան Ձեր 2014 թվականի
նոյեմբերի 5-ի N231-ի 3 գրության

Հարգելի պարոն Հայրապետյան,

Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակները հաստատված են ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի <<Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին>> N194-Ն որոշմամբ, որի 1-ին կետի բ) ենթակետով հաստատված կարգի համաձայն ՀՀ գյուղատնտեսության նախարարության ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը 20-ն է:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը հատկացված ծառայողական ավտոմեքենաները Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2014 թվականի հոկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ծառայողական ավտոմեքենաների ամրակցման, սպասարկման և Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավարի 2013 թվականի օգոստոսի 23-ի N 38-Ա հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> N53-Ա հրամանով ամրակցվել են համապատասխան պատասխանատու անձանց:

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 52 37 73, ֆաքս. (374 10) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմին սպասարկող ծառայողական ավտոմեքենաների բենզինի ծախսը ընթացիկ տարվա օգոստոս ամսին կազմել է 1,455,600 դրամ /ծախսված 3280 լիտր բենզինի համար/, իսկ սեպտեմբեր ամսին՝ 1,449,400 դրամ /ծախսված 3280 լիտր բենզինի համար/:

Հարգանքով՝

Արտաշես Կիրակոսյան

Կատ.՝ Տեղեկատվության եւ հասարակայնության հետ
կապերի բաժնի պետ Ս.Սիմոնյան
հեռ. (011) 521524